- *Հոգեխոսքային զարգացման հապաղում, աուտիստիկ սիմպտոմատիկայով-**3 երեխա / 2տղա, 1 աղջիկ/***

**Ծառայություններից օգտվող վարքային խնդիրներ ունեցող երեխաների**
Վարքային խնդիրներ ունեցող 2 երեխաները հաշվետու ժամանակահատվածում ներգրավված են եղել կենտրոնի կողմից մատուցվող ծառայություններում:

**Անձնական օգնականի աջակցությունից օգտվող երեխաներ:**
Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի շահառու **9** երեխա/ 7տղա, 2 աղջիկ/ օգտվել են անձնական օգնականի ծառայությունից: Վերջիններս ունեցել են հետևյալ խնդիրները՝

- Ինտելեկտուալ հապաղում
- վարքային խանգարում
- Աուտիզմ
- Հոգեխոսքային զարգացման հապաղում

Անձնական օգնականը նպաստել է շահառուների ազատ ապրելու և ներառվելու իրավունքի իրացմանը՝ օգտագործելով սեփական կարողությունները, սոցիալական և հոգեբանական աշխատանքի արդյունքում ձեռքբերված գիտելիքները, կարողությունները, հմտությունները:

**Ծառայությունում ընդգրկված կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների անհատական սոցիալական ծրագրեր:**
Հաշվետու ժամանակահատվածում մշակվել են ԱՍԾ-ներ 4 երեխայի համար և ըստ պլանավորման երեխաներին մատուցվում են կենտրոնի ծառայությունները:
Թարմացվել են ԱՍԾ-ներ 87 երեխայի համար:

**Ներկայացված հաշվետվություններ, հիմնավորող փաստաթղթեր և տեղեկատվական համակարգում իրականացված մուտքագրումներ:**
**«Մանուկ» ՏՀ-ի «ԿԴԻՀ երեխա» ենթահամակարգի շահագործում:** Հաշվետու ժամանակահատվածում Հայկական Կարիտասի Գավառի «Փոքրիկ Իշխան» երեխաների ցերեկային կենտրոնի կողմից «Մանուկ» ՏՀ-ի «ԿԴԻՀ երեխա» ենթահամակարգում մուտքագրված դեպքերը թարմացվել են, բայց համակարգում առկա որոշակի տեխնիկական խնդիրների պատճառով գործընթացը լիարժեք չի իրականացվել: Տեխնիկական շտկումից հետո տվյալները կլրամշակվեն կենտրոնի կողմից:

**Այլ միջոցառումներ/գործողություններ**

**<u>Անձնակազմի մասնակցություն դասընթացների/ վերապատրաստումների/ քննարկումների հաշվետու ժամանակահատվածում:</u>**

- Օգոստոսի 29-սեպտեմբերի 2-ը կենտրոնի համակարգողը Հունաստանում մասնակցել է Կարիտաս Եվրոպայի <<Հույսի կառուցում՝ սրտերը կամրջելով. Կարիտասի Երիտասարդ կամավորների արժեքները գործնականում>> ֆորումին:

*Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի համակարգողը անձնակազմի հետ պարբերաբար թիմային քննարկում/հանդիպումներ է իրականացրել հետևյալ թեմաներով՝*

- Հաշվետու ժամանակահատվածում գործողությունների քննարկում և
- Սոցիալական, կրթական միջոցառումների իրականացում: Գործողությունների և պարտականությունների բաշխում կենտրոնի աշխատակազմի շրջանում ըստ իրականացվող միջոցառումների